



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ N^o- 01Լ

ՀՀ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ
ԵՎ ՀՀ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ 12.01.1999թ. ԹԻՎ 1
ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Դատարանակազմության մասին» ՀՀ օրենքի 27-րդ և 28-րդ հոդվածներով՝ ՀՀ դատարանների նախագահների խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել ՀՀ դատարանների նախագահների խորհրդի կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի՝ 1999թ. հունվարի 12-ի «Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 1 որոշումը:
3. Հանձնարարել դատական դեպարտամենտին 30-օրյա ժամկետում մշակել նոր կանոնակարգի նախագիծ, որում ներառված կլինեն առանձին լիազորությունների իրականացման կարգերը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆ
10 օգոստոսի 2006թ.
ք. Երևան

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Դատարանների նախագահների խորհրդի

Հասկացություններ

1. Սույն կանոնակարգում հետևյալ հասկացություններն օգտագործվում են հետևյալ իմաստով՝
 - 1.1. Խորհուրդ - դատարանների նախագահների խորհուրդը, ինչպես նախատեսված է «Դատարանակազմության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ գլխում.
 - 1.2. նախագահներ կամ նախագահ – վճռաբեկ դատարանի, նրա պալատների, վերաքննիչ դատարանների, տնտեսական դատարանի և առաջին ատյանի դատարանների նախագահները կամ նրանցից յուրաքանչյուրը.
 - 1.3. նախագահող – Խորհրդի նիստը նախագահողը.
 - 1.4. քարտուղարություն - դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնի Խորհրդի գործունեության սպասարկումը իրականացնող ստորաբաժանումները կամ պաշտոնատար անձը.
 - 1.5. ծանուցում – խորհրդի նիստի մասին ծանուցումն է:

Խորհրդի նիստերը

2. Դատարանների նախագահների խորհրդի նիստերը հրավիրում և նախագահում է Վճռաբեկ դատարանի նախագահը, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ նրա հանձնարարությամբ՝ վճռաբեկ դատարանի պալատներից մեկի նախագահը: Եթե վերջիններս բացակայում են, ապա նիստերը վարում է տարիքով ավագ նախագահը:
Ընդ որում՝
 - 2.1. Խորհրդի հերթական նիստերը հրավիրվում են առնվազն երեք ամիսը մեկ անգամ:
 - 2.2. Արտահերթ նիստերը հրավիրվում են որևէ նախագահի գրավոր առաջարկով, որը հասցեագրվում է Վճռաբեկ դատարանի նախագահին:

Նման առաջարկություն ստանալու դեպքում Վճռաբեկ դատարանի նախագահը գումարում է արտահերթ նիստը ոչ ուշ, քան պահանջը ներկայացնելու օրվանը հաջորդող երեսուներորդ օրը:

3. Խորհրդի նիստն իրավագոր է քվեարկությամբ որոշումներ ընդունել, եթե ներկա է նախագահների առնվազն 2/3-ը:
4. Խորհրդի նիստին մասնակցում են նախագահները, քարտուղարության ներկայացուցիչները: Նիստը լուսաբանելու նպատակով նիստին կարող են ներկա գտնվել լրատվության միջոցների ներկայացուցիչները:
5. Նիստին մասնակցելու իրավունք ունի ցանկացած դատավոր, որին վերաբերվող հարցը քննարկվելու է տվյալ նիստում: Այս նպատակով նա ծանուցվում է նիստի վայրի և ժամանակի մասին՝ սույն կանոնակարգի կիրառելի դրույթներին համապատասխան: Ծանուցման հետ միասին նրան ուղարկվում են միայն իր հարցին առնչվող նյութերը:
6. Խորհրդի նիստերը գումարվում են Երևան քաղաքում՝ Վճռաբեկ դատարանի նստավայրում՝ Վազգեն Սարգսյան 5 հասցեով (նիստերի մշտական վայրը): Այլ վայրում նիստ կարող է հրավիրել միայն Վճռաբեկ դատարանի նախագահը:
7. Նիստերն անց են կացվում աշխատանքային օրերին և ժամերին: Բացառիկ դեպքերում, ելնելով հարցի հրատապությունից, նիստ կարող է հրավիրվել ոչ աշխատանքային օրերին և ժամերին:
8. Նիստերն արձանագրվում են: Նիստերի արձանագրությունը ստորագրում է նախագահողը և արձանագրողը:
9. Նիստերը կարող են ձայնագրվել, եթե այդպես որոշի Խորհուրդը:
10. Յուրաքանչյուր նիստ սկսվում է օրակարգի քննարկմամբ և հաստատմամբ (տես կետ 18):

Ծանուցումը

11. Քարտուղարությունը ծանուցում է նախագահներին նիստի վայրի (եթե տարբերվում է նիստի անցկացման մշտական վայրից) և ժամանակի մասին: Ծանուցմանը կցվում է օրակարգի նախագիծը:
12. Ծանուցումն ուղարկվում է այնպիսի եղանակով, որը խելամտորեն կապահովի դրա ստացումը նիստից առնվազն 5 օր առաջ, այդ թվում՝ սովորական փոստային առաքման ձևով, առձեռն կամ էլեկտրոնային փոստի միջոցով: Ծանուցման եղանակն ընտրում է քարտուղարությունը՝ ելնելով տվյալ նախագահին ծանուցելու հարմարավետությունից:
13. Ծանուցման հետ միասին նախագահներին ուղարկվում են նիստի օրակարգում ընդգրկված բոլոր հարցերի վերաբերյալ նախագծերը, ինչպես նաև դրանց առնչվող նյութեր, որոնք անհրաժեշտ է տրամադրել նախագահներին՝ հարցի իրազեկ քննարկման նպատակով:

14. Նիստին մասնակցելը յուրաքանչյուր ծանուցված նախագահի պարտականությունն է: Բացակայություն թույլատրվում է միայն հարգելի պատճառով: Բացակայության մասին յուրաքանչյուր նախագահ պարտավոր է նախօրոք հայտնել Վճռաբեկ դատարանի նախագահին:

Օրակարգը

15. Նիստի օրակարգի նախագծում հարցերն ընդգրկվում են Վճռաբեկ դատարանի նախագահի հանձնարարությամբ կամ որևէ նախագահի առաջարկով, եթե այն ներկայացվել է 16 կետին համապատասխան:
16. Օրակարգում հարց ընդգրկելու համար պարտադիր ներկայացվում են՝
- 16.1. Վճռաբեկ դատարանի նախագահին հասցեագրված միջնորդություն, որը նկարագրում է հարցի նախապատմությունը, սահմանում է բուն հարցը և շարադրում է որոշման նախագծի անհրաժեշտության հիմնավորումը, և
 - 16.2. Խորհրդի որոշման նախագիծն այդ հարցի վերաբերյալ:
17. Քարտուղարությունը կազմում է օրակարգի նախագիծը, որը ներառում է հարցի սահմանումը, հարցի վերաբերյալ առկա նյութերի ցանկը և զեկուցողի անունն ու ազգանունը:
18. Օրակարգը քննարկվում և հաստատվում է նիստին ներկա նախագահների ձայների պարզ մեծամասնությամբ՝ հետևյալ կարգով.
- 18.1. Նախագահողը հարցնում է նախագահների կարծիքն օրակարգի (բաժանված նախագծի) վերաբերյալ:
 - 18.2. Նախագահողը ընթացիկ քվեարկության է դնում օրակարգում լրացուցիչ հարց ընդգրկելու յուրաքանչյուր առաջարկություն, եթե այն համապատասխանում է 16 և 23.1 կետերի պահանջներին:
 - 18.3. Նախագահողն ընթացիկ քվեարկության է դնում օրակարգի նախագծում ընդգրկված հարցն օրակարգում չընդգրկելու յուրաքանչյուր առաջարկություն: Ընդ որում, եթե այդ հարցը, սույն կանոնակարգի համաձայն, ներկայացված է որևէ նախագահի միջնորդությամբ, ապա՝
 - 18.3.1. տվյալ նախագահին խոսք է տրվում մինչև քվեարկությունը.
 - 18.3.2. օրակարգից հանվելու դեպքում հարցն ընդգրկվում է հաջորդ նիստի օրակարգի նախագծում, եթե հեղինակը չի հանում իր առաջարկությունն առհասարակ:
 - 18.4. Նախագահողը վերջնական քվեարկության է դնում օրակարգի նախագիծը՝ ընթացիկ քվեարկությամբ հավանության արժանացած փոփոխություններով:

Խորհրդի որոշումները

19. Խորհրդի որոշումն ընդունված է համարվում, եթե ստացել է նախագահների մեծամասնության ձայները:
20. Խորհրդի որոշումները, որպես կանոն, ընդունվում են Խորհրդի նիստում կազմակերպվող քվեարկությամբ:
21. Անհրաժեշտության դեպքում Խորհրդի որոշումները կարող են ընդունվել նաև հեռակա քվեարկությամբ՝ առանց Խորհրդի նիստ գումարելու: Այս դեպքում քվեարկությունն իրականացվում է բանավոր՝ կապի միջոցների օգտագործմամբ կամ այլ ձևով:
22. Խորհրդի որոշումները ձևակերպվում են առանձին ակտի ձևով՝ բացառությամբ արձանագրային որոշումների, որոնք արտացոլվում են Խորհրդի նիստի արձանագրության մեջ:
 - 22.1. Առանձին ակտի տեսքով ձևակերպված որոշումները ստորագրում է Վճռաբեկ դատարանի նախագահը:
 - 22.2. Արձանագրային որոշումներ են Խորհրդի գործունեության կազմակերպչական հարցերի վերաբերյալ որոշումները, եթե դրանք առանձին ակտի ձևով չեն ընդունվում:

Խորհրդի որոշումների ընդունման կարգը

23. Որոշման նախագիծը բաժանվում է նախագահներին քարտուղարության միջոցով ծանուցման հետ միասին:
 - 23.1. Բացառության կարգով նախագիծը կարող է բաժանվել նաև նիստի ընթացքում, եթե
 - 23.1.1. նիստում որոշվել է նոր հարց ընդգրկել նիստի օրակարգ, և
 - 23.1.2. նախագիծն այնքան պարզ է և հակիրճ, որ այն հնարավոր է քննարկել առանց նախապես պատրաստվելու:
24. Նախագիծը քննարկվում է *ըստ էության*՝ հետևյալ կանոններին համապատասխան:
 - 24.1. Նախագիծն առաջին նիստում ներկայացնում է քարտուղարությունը կամ զեկուցող նախագահը՝ դրանից հետո պատասխանելով նախագծին առնչվող հարցերին:
 - 24.1.1. Հարց տալու իրավունք ունի յուրաքանչյուր նախագահ, իսկ նախագահողի թույլտվությամբ՝ նաև նիստին հրավիրվածները: Ընդ որում.
 - 24.1.2. Հարցեր տալու համար նախագահողը հերթագրում է հարց տալ ցանկացողներին:

- 24.1.3. Հերթագրումը կրկնվում է այնքան անգամ, որքան անհրաժեշտ է հարցերը սպառելու համար:
- 24.1.4. Նախագահողը հանում է նախագծին չառնչվող և կրկնվող հարցերը:
- 24.2. Հարցերին պատասխանելուց հետո զեկուցումն ավարտվում է, և նախագահողը հրավիրում է մտքերի փոխանակման:
 - 24.2.1. Մտքերի փոխանակմանը մասնակցելու իրավունք ունի յուրաքանչյուր նախագահ, իսկ նախագահողի թույլտվությամբ՝ նաև նիստին հրավիրվածները:
 - 24.2.2. Մտքերի փոխանակումն իրականացվում է նախագծի կամ դրա մի մասի վերաբերյալ կարծիք ու առաջարկություն հնչեցնելու միջոցով:
 - 24.2.3. Մտքերի փոխանակման մասնակիցները պետք է ձգտեն կարծիքն ու առաջարկությունը հնչեցնել 5 րոպեների ընթացքում:
 - 24.2.4. Նախագահողը կարող է հարցնել նախագահների դիրքորոշումը հնչեցված կարծիքի կամ առաջարկության վերաբերյալ քվեարկության միջոցով: Քվեարկությունից առաջ նախագահը զեկուցողը ելույթի իրավունք ունի:
- 24.3. Քննարկման արդյունքում նախագահողի առաջարկությամբ քվեարկվում է նախագիծը նիստի ընթացքում հավանության արժանացած լրացումներով հաստատելու հարցը: Այս դեպքում
 - 24.3.1. Եթե նախագծի օգտին է քվեարկում Խորհրդի անդամների մեծամասնությունը, ապա այն համարվում է հաստատված քննարկման ընթացքում հավանության արժանացած լրացումներով:
 - 24.3.2. Հակառակ դեպքում նախագիծը համարվում է մերժված և հանվում է քննարկումից:
- 25. Հավանության արժանացած նախագիծը լրամշակվում է քարտուղարության կողմից ներկայացվում նախագահի ստորագրմանը և բաժանվում նախագահներին: Ստացված որոշումները նախագահների հանձնարարությամբ տրամադրվում են դատավորներին և դատական ծառայողներին:

Հանձնաժողովներ

- 26. Խորհուրդը ստեղծում է էթիկայի հանձնաժողով և այնպիսի այլ հանձնաժողովներ, ինչպիսիք նպատակահարմար է գտնում ստեղծել իր գործառույթներն ու իրավասություններն առավել արդյունավետ իրականացնելու համար:
- 27. Հանձնաժողովներն իրականացնում են օրենքով և իրենց կանոնադրությամբ սահմանված իրավասություններ:
- 28. Հանձնաժողովները կազմված են նախագահներից, ընդ որում, յուրաքանչյուր հանձնաժողովում պետք է ընդգրկված լինի առնվազն երեք նախագահ:

Հանձնաժողովի անդամների թվաքանակը սահմանվում է հանձնաժողով
ստեղծելու որոշմամբ:

29. Խորհուրդը նշանակում է հանձնաժողովի նախագահ:

30. Հանձնաժողովների կանոնադրությունը հաստատում է Խորհուրդը:

Խորհրդի կնիքը

31. Խորհուրդն ունի սահմանված ձևի կլոր ռետինե կնիք: Կնիքի վրա պատկերվում է
Հայաստանի Հանրապետության զինանշանը, որի շուրջը հայերեն լեզվով գրված
են՝ «Դատարանների նախագահների խորհուրդ» բառերը: